

ՎՆԺԱՌԱՆՈՑՈՒՄ

— Գնահ, դու էլ անդօր ես մեր աղէտների առաջ, ասաց ջուղուած և դուրս եկաւ խանութից հուր աչքերով։

Արիւնոտ մի երկրից էր եկել նա. Կեանքի ամբողջ դառնութիւնը ճաշակած ալդ պատանին շատ քիչ բան էր լինում հայրենի երկրից, բայց ինչ որ լինում էր — սարսափելի էր։ Կեանքի մի վալրկեան էր ալդ, որ անջնջելի դրօշմ էր դրել նրա մանկական սրտում, մատաղ մարմնի վրայ։ Նրա աչքի առաջ դեռ ևս պատկերանում է շարունակ այն նեղ շաւիղը, որով փախել էր հայրենի գիւղից հարկանների մի խմբի հետ երկիւղը սրտում, վէրքը մարմնին, առաջը՝ անյոյս ապագայ, ետևում՝ ծխերի մէջ միտդ հայրենի խրճիթ, ուր սրի անողոք հարուածների տակ դիւթափ էին եղել նրա հարազատները։ Նա փախչում էր առանց լետ նալելու. հայրենի արգաւանդ հողը քշում էր հարազատներին իւր ծոցից. օտար երկնքի տակ միայն կարող էին ազատ շունչ քաշել, մի շունչ սակալն, որ ականջ հեղձուցիչ է քան արիւնոտ հայրենիքում։

Վեց տարի է անցել ալդ օրից։ Մենաւոր մանուկը փութորկի առաջ ընկած տաշեղի նման անցել էր մի տեղից միւս տեղ շարունակ հաց մուրալով։ Քանի նորահասակ երեխաներ ծաղրել էին նրան, քանի հոգածու ծնողներ հախոել նրա ծնողներին, որ առանց խնամքի թողնում էին իրենց դաւակլին մուրալ, քանի պճնուած հարուստներ սպառնալով երես էին դարձրել նրանից, բայց նա դարձեալ մուրում է. ալդպէս է մենաւոր որբի ճակատագիրը։ Հարուստ մարդը, հրաշալի ընտթիւնը, չքեղ քաղաքները կարծես չեն կարողանում ջնջել այն կնիքը, որ ամուր կպել է նրա ճակատին։ Այժմ նա մի զեղեցիկ ծովափնեալ քաղաքի մէջ է, հարուստ, փարթամ քաղաքի մէջ, ուր գիշերուալ լուսաւորութիւնը մրցում է ցերեկուալ հետ, բայց նա դարձեալ մուրում է. կեանքի փութորկը շարունակ խաղում է նրա հետ նա տարուբերւում է ինչպէս մի անօգնական նաւակ։ Ո՞վ գիտէ, ի՞նչ հանգամանք է նրան ալստեղ բերել, քաղաքի ալս փալլուն վաճառանոցը ալդ ժամին — արդեօք հացի պահանջը, թէ մի ուրիշ բան...

Ձմեռալին երեկու է. միգապատ, ցուրտ օրին լաշորդել է պարզ իրիկնաղէմ։ Բայց դուրսը դարձեալ ցուրտ է. Բոլորը տաք վերարկունների մէջ են փաթաթուած. շատերը նոյն իսկ

ամբողջ գլուխները ծածկել են մուշտակների երկար օձիքների մէջ, կանաչ ըստ սովորութեան գողարիկ են հագնուած, բաց պարանոցները փաթաթել են մետաքսեայ կամ թաւեայ ծածկոցներով, իսկ քնքով ձեռքերը դրել են փափուկ ձեռնակալների մէջ—չինի թէ նրանք ցրտատար լինեն և կորցնեն լատուկ նրբութիւնը: Ահագին բազմութիւն է խմբուել փողերի հրապարակի վրայ, որի շուրջը փալլում են ամեն տեսակ խանութներ, կառքեր են, որ սովորական քարքարոտ փողոցներից դժգոհանով անցնելով մտնում են ալդ կալով ծեփած հրապարակը, ուր նրանց անխնայներ ալ ևս ձայն չեն հանում և մի ախորժելի մեղմ թրթռոցով ձեւում: Այստեղ նրանց ընթացքի մէջ մի խորհրդաւորութիւն կալ, որովհետեւ նրանց վրայ ծանրացած անձնաւորութիւններն էլ խորհրդաւոր են: Ախ, ինչպէս հասկացել են նրանք կեանքի գաղտնիքը... ինչպէս չորս կողմից հալեացքներ են խլում և առանց նրանց ուշադրութեան արժանացնելու՝ թեթեւ շլջելով մտնում են խանութները... Հրաշալի է ալդ քաղաք օրուալ ալդ ժամին, երբ վառւում են ելքքտրական ճրագները և կեանքը, որ մինչև ալդ ժամանակ փակուած է լինում գրասենեակների ու ննջարանների մէջ, ալծմ դարթնում է և լուս ալխարհ ելնում: Սկսում է հարուստի առաւօտը...

Պատանի որբն էլ աղտեղ էր: Կիսամերկ, դողդողալով նա քալում էր անհաստատ քալերով ամեն տեսակ հագուստների, արդուզարդի, ոսկեղէնի ու արծաթեղէնի ահագին պահեստների միջով: Նրան ու ձեռքերը կապտել էին ցրտից, բաց և ալնպէս նա չէր շտապում: Մի պատառոտուն քսակ ուսին, որի ծակոտիների միջով երևում էին հացի կտորտանքը, նա առաջ էր գնում հանդիստ, անվրդով: Նա նալում էր բոլոր անց ու դարձ անողներին և հալեացքը բոպէպպէս փոխւում էր—մերթ գթախնդիր, մերթ սպառնալից: Հալեացքի բազմատեսակ արտալալտութիւններով նա դիտում էր ամենքին: Կան աղքատներ, որոնց դէմքի արտալալտութիւնիցն է միայն երևում որ ողորմութիւն են խնդրում: Ելլալիսինքն ձայն չեն հանում և եթէ հանում էլ են, բոլորովին անխելի ձայն, որի հնչիւնը ատամների ետևումն է մնում:—Անցորդները կարծում էին, թէ պատանի որբն էլ ողորմութիւն է խնդրում, մի ժամանակ, երբ շատերի կարծիքով չի կարելի ողորմութիւն տալ, որովհետեւ «ժամածեմք է, Աստուած կըարկանար: Ամենքն էլ տրտնջում էին:

—Ինչ է մարդկանց ոտների տակն է ընկնում: մի կտոր հաց ձեռք է բերել, թող գնալ նստի ուտի: Զէ որ «ժամածեմք» է:

Իսկ Նշանը—որբը առաջ էր գնում: Թերեւս նա չէր էլ լսում անցորդների նկատողութիւնները, որովհետեւ սահող ժամը նրան վերացրել էր ալդ քաղաքից: Նա լիշում էր: օրուալ հենց ալդ ժամին, արևի վերջին ծիրանագոյն ցոլքերի տակ էր

ձխում նրա հայրենի գիւղը, երբ երկիւղի սարսափի մէջ նա բռնեց նոյն նեղ շաւիղը. լուսի և խաւարի մաքառման ժամն էր. երկչոտ ամպերը լուսին դաւաճանելով մի մի ցուք էին լուում արևի շողերից և դէպի արևելք դիմում. ուր գտնուեց էր մի դժգոյն, հիւանդոտ կարմրութիւն, որ երեխաների բերանում արնայէս խորհրդաւոր կերպով «մեռելի արև» անունն է ստացել. Որբ Նշանը այդ «մեռելի արևի» տակն էր գտնուում. հեռու բարձր բլրից միայն նա կարողացել էր լետ նալել դէպի հայրենիք—գիւղը շարունակ մխում էր, իսկ արևը արդէն խորասուզուել էր սարի արն կողմը՝ ձորի մէջ, ձիշտ օրուալ այդ ժամին էր:

Այս մտքերի մէջ նա առաջ էր գնում վաճառանոցի միջով, երբ լանկարծ կողքից մի սուր փալլշաղցրեց նրա աչքը՝ նա արթնացաւ. կանգ առաւ ու արն կողմը նալեց. Մի շողշողուն խանութի առաջ էր, որի գլխին ցուցանակը կրում էր «Պահեստ գեղարուեստական իրերի, Եղբ. Ունևորեանների» մակագիրը: Արևը իւր վերջին շողքերը իւր գլխին պսակ կազմած ամպերից անդրադարձրել էր խանութի մաքուր ապակու ետեւում խնամքով ու ճաշակով դասաւորուած իրերի վրա: Այդ բոլոր բաղմատեսակ «Գեղարուեստական» իրերը չէր կարելի մէկ անգամից զանազանել իրարից. Բայց նրանց մէջ միտներինց շատ մեծ՝ կանգնած էր մի պատկեր, որը և իսկոյն գրւեց խեղճ որբի ուշադրութիւնը: Մի փոքր առաջ նա երազների մէջ էր հեռւ, հեռւ արւ վխտող քաղաքից, արեան վարում: Պատկերի վրաից ցուացած փալլը սթափեցրեց նրան սև երազից, բայց ահա նոյն երազի պատճէնը պատկերի վրալ.—Արիւնուշտը կանգնած է զոհի առաջ մերկ սուրը ձեռքին, ծալրը դէպի զոհի կուրծքը ուղղած: Աչքերը փալլում են՝ լի գազանալին կատաղութեամբ: Զոհը նուազած է. խեղճը հաստ է մաքառել. երկիւղը նրան գրեթէ անզգալութեան է հասցրել: Նա կծկուել է, ծնկները կրծքին դէմ արել, որոնցով ուզում է պաշտպանել սիրտը: Աչքերը աղաչանքով դէպի արիւնուշտն են ուղղուել, որից ոչ հեռու նրա նոյնքան գազան ընկերները խուզարկում են անշնչացած զոհերին: Արիւնը պատել է նրանց. շատերի կրծքից դեռ ևս շարունակում է հոսել կեանքի մեքենայի այդ իւղը: Արևը իւր կարմրագոյն ճառագայթներով ողողել է չրջակայքը հոսող արեան հետ մի քստմնելի ներդաշնակութիւն կազմելով: Մի քիչ հեռու փալլում է սպիտակափառ լեռուր, իբրև վկայ արն անհուն խեղճութիւնների:

—Փախէք, փախէք, թէ չէ աւարը կվերջանալ և մենք անողոք ճանկելի մէջ կընկնենք—կանչեց Նշանը անգիտակցօրէն:

Խեղճ, նա կարծում էր, որ այդ բոլորը իւր աչքի առաջն է կատարւում: Շրջապատողները խելագարի տեղ դրին նրան և չրջապատը իւր սովորական հանդիսաւոր ու խորհրդաւոր

գրութեան մէջ մնաց: Միայն մի կին, որ որբի ետեւից նստում էր պատկերին, վախեցած դիտում էր նրան—չլինի խելագար է, կարող է լարձակուել և ձեռնել իւր փոքրիկին, արդեօք չփախչի: Նրա մուգ կանաչադաշտ մետաքսեայ շորերը փափուկ էին ստուերների հետ և կամացուկ շուկ հանում իւրաքանչիւր փոքրիկ շարժման ժամանակ: Նրա փոքրիկ աղջիկն էլ, որ նոյն գոյնի շորեր ունէր հագին, վախեցած էր. նա մօտաւորապէս հասակակից էր Նշանին: Ո՞վ գիտէ, թերեւս այն ժամանակ, երբ Նշանի հարազատները ընկել են սրի հարձակների տակ, և նրանց դաւակը մի փոքր լետոյ ահի ու սարսափի մէջ փախուստ էր որոնել նեղ շաւղի մէջ, այդ չըբնադ արարածը մօր անհուն խնամքների տակ ժպտալիս է եղել ամեն տեսակ բարիքներ վալելելով: Նշանը կակծի ու թարկութեան մէջ վեր ուղղեց հալեացքը, որ ընկաւ վախեցած տիկնոջ, ապա նրա աղջկալ դէմքերին:

—Սա մեր պատկերն է, մեր կեանքի պատկերը... Հն, նայեցէք, նման է ձերին... Լաւ նայեցէք... Ախ, եթէ այդ փոքրիկ առիւծի ուժը իմ մէջ լինէր...

Նա մատով ցոյց տուեց պատկերի կողքին կանգնած մի ձեռագործ փոքրիկ առիւծի վրայ, որ կարմիր բերանը բաց արած դէպի պատկերն էր նստում: Արդեօք նա զոհին կպատառօտէր, թէ արիւնդուշտ թշնամուն... Աղքատը չէր մտածում Նշանը, նա ալքքանը միայն խորհում էր, որ կուզէր առիւծ լինել...

Կինը առած նրան էր նստում: Գիժ է այս մուրաքիկը, մտածում էր նա. միթէ մէկը, որ ուտելու հացը շալակին կապած դիտում է այդ զեղեցիկ պատկերը, կարող է նմանուել սրի տակ հեծեծող զոհին: Նա մի արհամարհական հալեացք ձգելով մուրաքիկ երեսպալի վրայ խանութ մտաւ: Նրան հետեւեց նաղելի աղջիկը: Յոյց դրուած պատկերը նա պիտի դնէր իւր զարդարուն դահլիճի ճակատին՝ մուտքի դիմաց կախելու համար ոսկէզօծ լալն շքանակի մէջ:

Նշանն էլ խանութ մտաւ և կանգնեց դռան մօտ:

Տիկինը պահանջեց պատկերը. արագաշարժ գործակատարը մի ակնթարթում մէջ տեղ բերեց այն: Այդ րոպէին ելեքտրական ճրագները վառուեցին. պատկերը կարծես լուսոյ ծովի մէջ լինէր: Առիւնդուշտն էր երևում ամենից առաջ. նրա աչքերը արտասուքների տակից Նշանին ուղղուած, կարծես շանթել էին ուղղում, այդ աչքերը կարծես լեռներ ու ձորեր անցնելով հետեւել էին այստեղ էլ հալոյնի հողից դուրս, հայածել էին ուզում նորան: Նշանը մօտեցաւ: Ամենքն էլ զմայլուած դիտում էին: Տիկինը մերթ նրան էր նստում, մերթ վերև դարձնում հալեացքը. այդ միջոցներին նա երեսպալութեամբ թաչում էր իւր դահլիճը և որոշում այն տեղը, ուր պիտի կախէր այդ հրաշալիքը:

—Դա մեր պատկերն է, լուսեց Նշանի ձայնը:

Տիկինը լստ նալեց, իսկ փոքրիկ աղջիկը մի կողմ քաշուեց աղաղակելով «վալ մալրիկ, վախենում եմ»:

—Ա՛խ, Աստուած իմ: Իսէր Աստուծոյ հեռացրէք ալդերես առածին:

Յաճախ է պատահում որ մեր հիացմունքով լսած բանը մեր աչքի առաջ տեսնելիս զարմանում ենք մեր միամտութեան վրայ, որ այնպէս վառ գոյնով ենք երեակալել լսածը, մինչև իսկ խորշում ենք իրականութիւնից: Նոյնպէս և կտաւի վրայ ներկերի միջոցով վրձինի պատկերացրած մի առանձին գրաւորութիւն է ունենում մեզ համար, մի առանձին հաճելի տպաւորութիւն թողնում, չնայելով որ նոյն պատկերը իրականութեան մէջ եթէ ոչ անտարբեր, գոնէ շատ նուազ զգալուն դրութեան մէջ կգնէր մեզ: Տիկինը զբաղեցնողը ալդ պատկերի գեղարուեստական նրբութիւնը չէր միայն կամ վրձինի հանճարը: Նրան ցանկալի էր վիշտ թափել խեղճութեան ալդ ստեղծելի տեսարանի ստուերների վրայ. իսկ նա տեսաւ, որ ստուերները ալդ փոքրիկ երեխայի մէջ մի շարժուն բան դարձան, որոնք կարող էին նրա սրտի դռնով ներս նայել ծակծկել նորան, անհանգիստ անել: Միմիայն պատկերն էր հարկաւոր, իսկականը նրան լոկ տանջանք կարող էր պատճառել: Ուստի նա խորշում էր նրանից:

—Ահա իսկական պատկերը, տիկին, ասաց որքը, պատառոտուն հագուստի ծալրով կուրծքը ծածկելով:—Իմ մայրը հէնց այնպէս էր կծկուել արիւնառւշտի առաջ, ինչպէս ալդ պատկերի գինը, իսկ կողիս չորացած վէրքը խօ տեսաք:

Բոլորը լուռ էին: Ճրագները շարունակում էին լոյս տալ. արիւնառւշտը անդադար սարսափի մէջ էր պահում առաջը կծկուածին, չուզէնալով մէկ անգամից վերջ տալ նրա մանուռը կեանքին: Տիկինը ըռպէական լուզումից լետու կրկին վերացել էր իւր դահլիճը: Նշանը անդադար նալում էր պատկերին: Երբ աչքը զոհին էր դարձնում, անհուն կսկիծ էր նկատում նրա երեսին, որ կարծես գալարուելով անցնում էր ամբողջ նեարդների միջով, իսկ երբ արիւնառւշտին էր դարձնում, լցւում էր զազանալին կատաղութամբ:

—Տեսնում ես, հրճում էք ալդ պատկերով, տիկին: Յանուն ալդ հրճուանքի մի ողորմութիւն տուէք ինձ —այն առիւծը, որ դրա կողքին էր դրուած պատուհանում—ասաց որքը պատկերի վրայ ցոյց տալով:

—Ռետինէ առիւծը—շտապեց լալտարարել գործակատարը:

—Բերէք, հրամայեց տիկինը:

Հրամանը իսկոյն կատարուեցաւ: Առիւծը Նշանի ձեռքը տուին:

Նշանը անսովոր շարժումներ էր անում. նա կարծես այն ողորմութիւն խնդրող մաւրացիկը չէր. թւում էր, որ նա լանկարծակի մի նոր ոլթ ստացաւ. նա ցանկանում էր լարձա-

կուել ան արիւնարբուի վրայ, խեղդել, ճղմել իւր մատներով մէջ: Մէկ անդամից նա աչք ածեց շուրջը և բազումները թուլացան: Նա զգում էր, որ անդօր է....

—Ախ, եթէ սրա ոլժը իմ մէջ հոսէր, կշամիրէի, կսառառտէի բոլորին... ասաց առիւծը կրծքին սեղմելով:

Անշունչ, ռետինէ առիւծ, որ իսկույն ճմլուեց նրա կրծքի վրայ և մի անկերպարան բան դարձաւ: Իսկ եթէ անշունչ չլինէր—դուցէ ամենից առաջ նրա վրայ կկարճակուէր: Բազա առիւծը կարծես արդ ձեռագործ գաղանը իբրև ծաղր նրա ձեռքըն էր տուել և Նշանը բարձրացրեց ան ու ամուր դետնին զարկեց, որ կրկին բարձրանալով մի անկիւն նետուեցաւ:

—Գնա, դու էլ անդօր ես մեր աղէտների առաջ:

Նա լուրդուած էր ինչպէս կեսախնկադար: Վերջապէս մի խղճալի հալեացք ձգեց շրջապատողների, մանաւանդ փոքրիկ աղջկայ վրայ և դէպի դռները դնաց, արտասանելով.

—Դու էլ անդօր ես. ...

